

մոայլ բառերը՝ դաշոյնի պէս փայլատակող. մահահոտ եւ արիւնաներկ գրականութիւն հայկական ճակատագրին պէս:

Գրականութիւնը ժամանակի ու միջավայրի պատկեր է. առէ՛ք վերջին 80 տարուան պօլսահայ կեանքը. սկիզբները՝ հայկական կեանք չի կայ գրեթէ եւ գրականութիւնն ալ գոյութիւն չունի: Սահմանադրութենէն²՝ ազգային կեանքը կ'սկսի եւ անոր հետ կ'սկսի գրականութիւնը եւ լեզուի խնդիրը. Միսաքեան, Օտեան, Ռուսինեան, Երեւան կ'ելլեն: Այս առաջին շրջանը հարուստ է նաեւ բանաստեղծներով. Պէշիկթաշլեանով, Դուրեանով, Նարպէյով: Վերջը եկաւ այն սերունդը³ որուն Արփիար անվիճելի առաջնորդն է. յեղափոխութեան շրջանին նախօրեակը կամ սկիզբն ենք. Չօպանեան անոր հմայիչ երգողը եղաւ: Քիչ վերջը սկսաւ բուն յեղափոխութեան շրջանը որ իր գրողներու եւ քերթողներու հոյլը ունի: Սուգով պարտւորած համաստեղութիւն՝ որուն *Հեթանոս երգերու* երգիչը գեղեցիկ աստղերէն մէկն է: